



ՆՈՐԱՀԱՅՑ ԲԱՌԵՐ ՄՈՎԱՍԵՍ ԿԱՂԱՆԿԱՏՎԱՅՈՒ «ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԱՂՈՒԱՆԻՑ ԱՇԽԱՐԻՆ» ԵՐԿՈՒՄ

Լեզվի բառապաշարի զարգացման և հարստացման կարևորագույն միջոցներից է բառակազմությունը, իսկ հայերենն այն լեզուներից է, որն ունի բառակազմական լայն հնարավորություններ: Մեր նշանավոր մատենագիրներից շատերը, պայմանավորված ժամանակի պահանջով և անհատական նախասիրությամբ, հմտորեն օգտվել են դրանից և ստեղծել բազմաթիվ նոր բառեր, որոնց մի զգալի մասը պահպանել է իր կենսունակությունը հետագայում՝ ընդիուպ մինչև մեր օրերը: Այդպիսի մատենագիրներից, ի թիվս մեծն Նարեկացու և Վ դարի հայտնի հեղինակների, կարելի է նշել Հովհան Օձնեցու, Հովհան Մայրազոմեցու, Հովհաննես կաթողիկոս Դրասխանակերտցու, Գրիգոր Տաթևացու, Ներսես Լամբրոնացու և այլոց ստեղծագործությունները, ինչպես նաև Մ. Կաղանկատվացու «Աղվանից աշխարհի պատմություն» երկը¹: Ցավոք, Նոր հայկազյան բառարանի² հեղինակները Կաղանկատվացու այս երկից իրենց ձեռքի տակ ունեցել են միայն հատվածներ, ուստի և հնարավորություն չեն ունեցել նրանում առկա նորաբանությունների ողջ հարստությունն ամբողջությամբ արտացոլել իրենց մեծարժեք բառարանում: Այդ նորաբանությունների մի մասը, իբրև նորահայտ բառեր, տեղ է գտել Հ. Աճառյանի Արմատական³, իսկ անհամեմատ մեծ չափով՝ Ռ. Ղազարյանի Գրաբարի բառարաններում⁴: Կաղանկատվացու Պատմության բառապաշարի, մասնավորապես նորաբանությունների (նորակազմություններ, փոխառություններ ևն) վերաբերյալ առավել ամբողջական պատկերացում կազմելու համար ստորև ներկայացնում ենք այդ երկից քաղված այնպիսի նոր բառեր, որոնք արձանագրված չեն Նոր հայկազյան և Ռ. Ղազարյանի Գրաբարի բառարաններում: Արմատական և Գրաբարի բառարաններում, ինչպես նաև սույն հոդվածում ներկայացված բառերի մի զգալի մասը առկա է Առձեռն բառարանում⁵, մի հանգամանք, որը հնարավորություն է տալիս ճշգրտելու վերջինում ավելացված 5000 նոր բառերի մի մասի ժամանակագրությունը:

Ռ. Ս. ՂԱԶԱՐՅԱՆ, Գ. Ս. ԱՎԵՏԻՍՅԱՆ

¹ Տե՛ս «Մովսեսի Կաղանկատուացույ Պատմութիւն Աղուանից աշխարհի», Թիֆլիս, 1912, Եր., 1983:

² Տե՛ս «Նոր բառգիրք Հայկազեան լեզուի», հ. Ա, Բ, Վենետիկ, 1836-1837:

³ Տե՛ս Հ. Աճառեան, Հայերէն արմատական բառարան, հ. Ա-Է, Եր., 1927-1935:

⁴ Տե՛ս Ռ. Ս. Ղազարեան, Գրաբարի բառարան, հ. Ա, Բ, Եր., 2000, *նույնի՛* Գրաբարի հոմանիշների բառարան, Եր., 2006:

⁵ Տե՛ս «Առձեռն բառարան հայկազեան լեզուի», Վենետիկ, 1865:

ԱԶԱՏԱԶԱՐՄ, ա. Ազնվական: Առեալ... զազատագարմ տոհմն (255)⁶:
ԱԶԳԱՇԱՂԱԽՈՒԹԻՒՆ, գ. Ազգապղծություն: Ըստ իրեանց ազգա-
շաղախությանն (373):

ԱԼԵՓԱՐԹԱՄ, ա. Շատ ալիքներ ունեցող: Ալեփարթամ խորոցն ջրա-
յեղց բռնութիւնքն անդէն յինքեանս սուգան (220):

- ԱԾԵԼ Ի ԶԱՐՄԱՅՈՒՄՆ. Զարմացնել, հիացնել: Որք զիրեշտակս ա-
ծին ի զարմացումն (25):

ԱԿՆԱՎԱՅԵԼՈՒՉ, ա. Աչքի համար վայելուչ, զվարճացնող: Անդ այ-
նուհետև լինէր սրտալիր ուրախութիւն և ակնավայելուչ տեսիլ հայեցելոցն
(236):

ԱԿՆ ՅԱՅՏՆԻ, մ. Աչքերի առջև, ակնհայտորեն: Ապա եթէ ոչ կարեք
ակն յայտնի Արեացս զնդի ցուցանել (120):

ԱՄԵՆԱՅԱԶՈՂ, ա. Ամեն ինչում հաջողակ: Վստահ եղեալ հօրն յա-
մենայաջողն Զիանշիր (198):

ԱՄԵՆԱՓԱՌ, ա. Խիստ փառավոր: Մինչև ցայսօր ժամանակի ըն-
դարձակեաց սմա Տէր լինել առ ամենեսին ամենափառ (230):

ԱՄՐԱԾԱԾԿԵԼ (իմ), չ. Ծածուկ տեղ ապահով պահվել: Ամրածած-
կեալ կային երանելեացն վկայից ամենասուրբ նշխարք (50):

ԱՆԶԱՆԳԻՏՈՂ, ա. Անվախ: Անզանգիտող մրցմամբն իր առնոյր վեր
ի գլուխն (203):

- ԱՆՉՆԱՊԱՇՏ ԼԻՆԵԼ. Անձամբ կատարել արարողությունը (կրո-
նական): Տքնութեամբ անձնապաշտ լեալ արքայն (90):

ԱՆՇԶԵՂԱՅՈՒՑԱՆԵԼ, պր. Անշքեղ դարձնել, տղեղացնել: Անշքե-
ղացուցանելին գտեսիլ նոցա իբրև զիշուց կահակրաց (193):

ԱՆՈՒՇԱԳՈՅՆ, ա. Ավելի կամ շատ անուշ: Անուշագոյնք խնկովք
ծխեցելովք... ի հանգստարանն մտանելին (72):

ԱՆՏԱՌԱՅԱՐ, ա. Անտառախիտ: Անտառայար մայրաստանիկ աշ-
խարհն Արցախայ (108):

ԱՍՏԵՂԱՆՄԱՆ, ա. Աստղի նման: Լոյս աստեղանման ծագեալ ի
տեղիոցն (112):

ԱՍՏՈՒԱԾԱՅԱԶՈՂ, ա. Աստծով հաջողակ դարձած: Ի գովեստ աս-
տուածայաջող առնն այնորիկ (390):

ԱՐԳԱՆԴԱԿԻՅ, ա. Արզանդից նոր ծնված, հասակակից: Մինչև զհա-
սակածին և զարզանդակից մանկուոնս նահանջմամբ թափէր (204):

ԱՐՈՒԱԶԵՂԾ, ա. Արվամոլ: Այպանէին, պիղծ և արուագեղծ կարողա-
յին (159):

- ԲԱՄԲԱՍԱՆՍ ԴՆԵԼ. Բամբասել: Եթէ աշխարհական ոք յերիցու
կամ ի սարկաւագի վերայ բամբասանս դիցել (101):

- ԲԱՆ ԴՆԵԼ. Բանակցել: Արձակեցին դեսպան յաշխարհն Հոնաց՝
բանս դնել ընդ նոսա և ուխտս հաստատել (130):

ԲԱՐՉՐԱՍԱՅՐ, ա. Բարձր մայրի փայտից, բարձր՝ երկար փայտից:
Յօրինեալ և զանհեղիեղ գեղարդն ի բարձրամայր փայտից (123):

ԲՐԱԾ, ի, գ. Փորելը, փորած տեղը: Թողոյր զառաջին բրածն (88):

⁶ Փակագծերի մեջ առնված թվերը նշում են «Պատմութեան» (1912) համապա-
տասխան էջերը:

ԳԵՂԱԶԱՆԵԼ (իմ), չ. Գեղեցիկ զարդարվել: Գեղազանեալ ոսկիագօծ տեսակաւ (247):

ԳԵՂԱՇԱՐԵԱԼ, ա. Գեղեցիկ շարված: Մարգարտահոծ, գեղաշարեալ զպատմունանս (227):

ԳԻՒՂԱՊԵՏ, գ. Գյուղի գլխավոր՝ կառավարիչ: Եւ ժողովեալ առ ինքն... զգաւառապետս և զգիտապետս (179):

ԳՐԹԱՀԱՐԵԼ, մ. Ջարդել, ջարդովխուրդ անել: Սպարապետութիւն Ջուանշիրի Աղուանից և գրթահարել նորա գՊարսիկս (202):

ԴԱՍԱՀՈՅԼ, ա. Խմբով մի տեղ հավաքված: Ուր ի նմին գործ դասա-հոյլ մարդկան բազմութիւնն զհողն զգեստիւք իւրեանց ի բաց պեղէին (235):

ԴՐԺՈՂԱԲԱՐ, մ. Նենգությամբ, խարդախությամբ: Դրժողաբար ուխտագանցեալ երթայր առաջի կաթուղիկոսին (251):

- ԴՆԵԼ ՌԱԶՄ ՊԱՏԵՐԱԶՄԻ. Կռվել: Եւ անդ դնէր ընդ նոսա... ռազմ պատերազմի (203):

ԵԿԵՂԵՑԱԲԱՐ, մ. Եկեղեցու նման՝ ձևով: Ջիւր մեծագոյն խորանն հրամայեաց ի շիկակարմիր խորանի սրբոց ի վերայ հարկանել եկեղեցաբար (70):

ԵՂՋԻՒՐԵՂԵՆ, ա. Եղջյուրից պատրաստված, եղջյուրյա: Չմբոցս եղջիրեղէնս (182):

ԵՐԱԳԱԲԱՅԼ, ա. Արագաքայլ, արագավագ: Չյիսուն և երկու ձիս երագաքայլս, յորս ինքն թագաւորն նստէր (227):

ԵՐԿԱԿԻՍԵԼ, մ. Երկու կեսի՝ մասի բաժանել: Հրամայեաց երկակիսեալ զհարկացն լուծ թեթևացուցանել յառաջին երրեակն չափուց զմասն մի (228):

ԵՐԿԲԱՅԵԼԻ, ա. Կասկածելի, տարակուսելի: Երկբայելի մտօք խաբելութիւն զիրսն կարծեցաք (240):

ԵՐԿՐԱԶԱՓՈՒԹԻՒՆ, գ. Երկրներ չափելը՝ շրջելը: Ի զբօսանս բոլոր տարեկան աւուրցն՝ հրճուական անցուցանելով երկրաչափութեամբ (253):

ԵՐԿՐԱՎԱՐ, ա. Երկրային, աշխարհասեր: Տուաւ նմա... երկրավար քաղցրութիւն և հեզութիւն մարդկային (222):

ՉԵՏԵՂԱՆԱԼ, չ. Տեղավորվել, մնալ: Այլ առաքէր միայն ծածկաբար առ կայսրն Հերակլիոս՝ զետեղանալ նմա անդէն (166):

ՉԵՐԿՐԵԼ, մ. Պառկեցնել (գետնին): Չերկրեալ զչարագործսն՝ արկանել հրամայէր ընդ ունչսն (62):

ՇԱՏԳՏԱՆԵԼԻ, ա. Դատապարտելի: Ի բաց հրաժարելով յառաջին ըստգտանելի գործոց (27):

ԹԱԳԱՌԻԿ, ա. Թագ առնող, թագավորող: Յետ այտորիկ գերահռչակ ևս պատուով ըստ թագառիկ այքայից (226):

ԹԱԳԱՒՈՐՈՐԴԻ, դոյ, գ. Թագավորի որդի: Հաւատարիմ դայեակ և դաստիարակ թագաւորորդոյն Շաքայ (180):

- Ի ԴԻՄԻ ԵԼԱՆԵԼ. Դեմ դուրս գալ, դեմն առնել: Արդ պատրաստ լեր ի դիմի ելանել (128):

- Ի ՉԵՂՋ ԳԱԼ, տես Ի ՉԻՂՋ ԳԱԼ: Եւ ապա ի գեղջ եկեալ (369):

- Ի ՉԻՂՋ ԳԱԼ. Չղջալ, փոշմանել: Ի զիղջ եկեալ, զամենայն վնասն ի հայրն իւր արկանէր (24):

- Ի ՍՈՒՐ ՍՈՒՍԵՐԻ ԱՐԿԱՆԵԼ. Սրի քաշել: Ի սուր սուսերի արկանել,

գորս գտանէ ի նմա (366): Ի սուր սուսերի էարկ զկանայս և զմանկունս (375):

ԼԵՌՆԱՎԱՅՐ, ի, գ. Լեռնային վայր՝ տեղ: Լիներ միսանգամ ի լեռնավայրի անդ բախումն ընդ միմեանս (203):

ԽԻՉ, գ. Կորիզ: Նաև զչոր խիզ խաղողոյ տայր անձանց թշուառականացն աղալ և ուտել (187-8):

ԽՈՐԱԽՈՒՈՒՄ, ա. Խոր խոխոմ (ծոր) ունեցող: Ի խորախոխոմ անտառայար և ի մայրաստանիկ աշխարհն Արցախայ (98):

ԽՐՈՒՏԱՉԵՒ, ա. Խրոխտ տեսք ունեցող, հսկայակերպ: Փիղն խրոխտածև, որով դրոմք թագաւորաց ահեղագոյն և բազմաշուք զարդարին (226):

ՇԱՅՐԱՓԱՌԵԼ, ն. Մեծ պատվով փառավորել: Ջարևելից իշխանն ծայրափառել հրամայեաց թագաւորն հարաւոյ (226):

ՇԱՅՐԱՓԱՌԵԼԻ, ա. Մեծ պատվով փառավորվելու արժանի: Իբրև լսէր բռնակալն հարաւոյ սակս մերոյ իշխանին ի ծայրափառելի բարելաւութեանն (194):

ԿԱՊՈՒՏԱԿԱՆԱԼ, չ. Կապույտ գույն ստանալ, կապտել: Կապուտակացեալ էր հարուածովք ահագին տանջանացն (84):

ԿԻՍՕՐԵԱՅ, ա., մ. Օրերը պակաս մնացած՝ չլրացրած: Որդի նորին Ստեփաննոս կիսօրեայ վախճանեալ (374):

ԿՈՂԱԿԱՇԱՐԺ, ւս. Ալիքներից շարժվող, ալեկոծված: Կոհակաշարժ բռնութեամբ ծովասոյգ առնեն զերկիր (221):

ՀԱՄԱՊԱՏՈՒԻԼ, չ. Համահավասար պատիվ ունենալ: Աւանդէ նմա պատիւ ընդ Բագրատունիս և ընդ Մամիկոնեանս համապատուիլ (124):

ՀԱՍԱԿԱԾԻՆ, ա. Հասակակից, տարեկից: Մինչև զհասակածին և զարգանդակից մանկունս նահանջմամբ թափէր (204):

- ՀԱՍՏԱՏԵԼ Ի ՍԻՐՏՍ. Որոշել: Հաստատեցին ի սիրտս իւրեանց ժառանգել զփառս Արեաց աշխարհիս (192):

ՀԱՐԱԲԱԲՆԱԿ, ա. Հարավային կողմում գտնվող (արեգակի մասին): Ջրնակութիւն նորա պատմեցից քեզ. շեղագմաց, թիրընթաց, կողմնաւոր, ստուերաշուք, հարաւաբնակ (32):

- ՀԱՐԿԱՆԻԼ ԸՆԴԴԵՄ. Ընդդիմանալ: Եւ ոչ որ իշխէր հարկանիլ ընդդէմ նոցա (186):

ՀԻՒԱՆԴԱՊԱՇՏ, ա. Հիվանդին պահող՝ խնամող: Այլք զհիւանդապաշտս կոփէին (189):

ՀՄՏԱԻՈՐԵԼ (իմ), չ. Հմտանալ, հասկանալ, լավ տեղեկանալ: Որոյ զայն տեսեալ և հմտաւորեալ, թէ ի վերուստ է ազդեցութիւնն (250):

ՀՆԱՄԵԱՆ, ենի, ենից, ա. Հնամյա: Ամենայն մեծամեծաց հնամենից (տպ. յիննամենից) տոհմից (119):

ՉՈՐԱԽԻՏ, ա. Շատ ձորեր ունեցող: Չորախիտ ապառաժք լերանց (178):

- ՄԱՀ Ի ՎԵՐԱՅ ԴՆԵԼ. Մահապատժի ենթարկել, սպանել: Չայնպիսին կապեալ ի դուռն արքունի տարցին, և դառն մահ ի վերայ դիցեն (100):

ՄԱՏԱՆԵԼ, ն. Մատանիով կնքել: Եւ զայս հրամանս մատանեցին (103):

- ՄԱՏԱՆԻ ԴՆԵԼ Ի ՎԵՐԱՅ, տես ՄԱՏԱՆԵԼ: Արքային Աղուանից մատանին եղաւ ի վերայ (103):

ՄԵԾԱՅԱՐՄԱՐ, ա. Խիստ բարեկարգ: Պղտորեաց զմեծայարմար կարգս բնակչաց դրանն Խոսրովու (165):

ՄԻԱՀԱՍԱՐԱԿ, ա. Միահավասար, հավասարակից: Չմիահասարակ սուրբ Երրորդութիւնն (114):

- ՄՏԱՅ ԳՈՐԾԻ. Լեզու: Քանզի բան ունիմ մտաց գործի (25):

ՄՕՐԱԶՈՒՐՔ, ջրոց կամ ջուրց, գ. Յեխտո ջուր: Գտին զնա բանակեալ... ի մէջ յորդաբուղխ մօրաջուրցն (182):

ՅՈՒՆԱՅԵՂՅ, ա. Բազմությամբ լցուած, խուռն: Եւ յոգնայեղ կանառացն ընքչամարտք եղեալ (273):

- ՆԱԽԱՀԱՍ ԼԻՆԵԼ. Նախ և առաջ հասնել: Դիմեալ որպէս ալիք ծովու՝ նախահաս յԱստեղն լինէր բլուր (109):

ՆԱԽԱՆԻՍ, ա. Առաջին տեղը նստող, նախաթոռ, նախագահական: Զնախանիստ բարձս ձեր, զպատիւ և զտուն (120):

ՆԱԽԱՇԻՆՈՂ, ա. Նախապէս՝ առաջին շինող: Պանոն ոմն ճգնաւոր յԱղուանից եղեալ նախաշինող (324):

ՆԱԽԱՐՇԱԻ, ա. Առաջին արշավանք՝ հարձակում կատարող: Անպարէր նախարշաւ յՈւտիեանն գաւառ (204):

ՆԻԶԱԿԱՆԻՏ, ա. Որտեղ խիտառխիտ նիզակներ կան: Որք զդուռն նորա պահէին շուրջանակի ասպարափակ, նիզակախիտ զգուշութեամբ (182):

ՇՔԵՂԱՏԵՍԱԿ, ա. Փառավոր տեսքով: Արի և շքեղատեսակն Սահղի Սմբատեան (374):

ՈՍՏԻԿԱՆԱԲԱՐ, մ. Ոստիկանի՝ վերակացուի պես: Ոստիկանաբար ի վերայ հասէք քննութեանն (234):

ՈՒՒՏԱԶԱՆՅԵԼ, չ. Ուխտը չպահել, ուխտազանց լինել: Յետ սակաւ ինչ ատուրց դրժողաբար ուխտազանցեալ երթայր առաջի կաթուղիկոսին (251):

ՉԱՐԱԾՆՈՒՆԴ, ա. Չարից՝ չար ծնողներից ծնված: Վասն կարգելոյ դպրոցս արքային Վաչագանայ չարածնունդ մանկանցն դիտքաց (50):

ՉՔՆԱՂԱԶԳԵՍ, ա. Չքնաղ, գեղեցիկ զգեստով: Եկեալ էր Մովսէս չքնաղազգեստն փառօք առաջի Աստուծոյ (95):

ՊԱՊԱՆԶԱԿԱՆ, ա. Պապանձեցնելու արժանի: Ամենաչար Պարսկաց պապանձական պաշտօնն՝ զի միշտ հակառակ կայր եկեղեցւոյն Աստուծոյ (65-66):

- ՊԱՏՈՒՀԱՍ ԴՆԵԼ. Պատժել: Պատուհաս դիցեն և ի բաց հալածեցեն ի շինէն (101):

ՊԱՐԵԳՕՏԵԼ, չ. Պարեգոտ հագնել: Պարեգօտեալ իբրև զարին Արքահամ (247):

ՍԱՂԱՐԹԱԾԱԲԱԼ, ա. Ճյուղերն արձակած՝ տարածած: Բազմաբերուն ծաղկեր իւրով սաղարթածաւալ գիտութեամբն (237):

ՍՐԱԿՈՇՈՒԹԻԻՆ, գ. Սրով ինքն իրեն հարվածելը՝ ծեծելը: Եւ մերկանդամ սրակոծութիւնք՝ դժոխսց տեսարան (241):

- ՍՐՈՅ ԾԱՐԱԿ ԱՌՆԵԼ. Սրի քաշել: Սրոյ ճարակ զամենեսեան առնէին ընդ երեսս դաշտին (128):

ՍՈՎԱԾ, ի, աց, ա. Խիստ քաղցած, սովից մեռնող, սովյալ: Բազմութիւն սովածացն ժողովեալ ի մի վայր՝ դիմէին ի վերայ այնպիսեացն, յափշտա-

կէին ի նոցանէ (188):

- ՎԱԽՃԱՆ ՄԱՀՈՒ. Մահ: Հասանէ մնա վախճան մահու (22):

ՎԱՇՏԻԿ, տկի, տկաց, գ. Փոքրիկ գորախումբ: Պակաս վաշտկօք մտեալ ի քաղաքն (121):

ՎԵՐԾԱՆԱԿԱՆ, ա. Վերծանելի: Վերծանական քերթութեամբ յառաջադէմ (257):

ՎԻՃԱԿԱԳԻՐԵԼ (իմ), չ. Զվեարկել: Եւ անդէն վիճակադրեալ որպէս գՄատաքիայն պարկեշտ այն Եղիազար՝ ի նոյն ժողովոյն առնու զառաքելական պատիւն (245):

ՎԻՄԱԽԱՆ, ա. Քարբարոտ: Վիմախառն, ձորախիտ ապառաժք լեռանց Արցախական ամուր գաւառացն (178):

ՏԱՃԿԱՉԻ, ա. Արաբական ձի հեծնող: Չոր Հոնահն կոչէին՝ իշխան գնդին տաճկածիոց (192):

ՏԱՆՈՒՏԵՐ, տեառն, գ. Վանահայր: Զշկայ՝ Ներսմերիի վանաց տանուտեառն և Գրիգորի՝ Յովսէփայ վանից տանուտեառն (347):

ՏԱՊԱԿԷՉ, ա. Խիստ տաք (օր): Ի ժամ տապակէզ ատուրցն (254):

ՏՈՂԱՉԱՓՈՒԹԻՒՆ, գ. Շարադրանք, շարադրելը: Չորս պատշաճ վարկաք մակագրել ի տառս տողաչափութեան մերում (119):

- ՏՈՒՐ ԵՒ ԱՌ ԳԵՂԱՐԳԱՅՆ. Նիզակների բախյունը՝ հարվածները: Տուր և առ գեղարդացն իբրև ճայթին որոտման ելանէր (124):

- ՅԱՃՈՒՑԱՆԵԼ ՉԵՐԵՍՍ. Բարկությունը իջեցնել: Չի կարացուք ցածուցանել գերեսս նոցա պատարագօք (180):

ՓԱՅՏԱՇԱՐ, ա. Փայտով շարված՝ շինված: Չփայտաշար յարկն քակէին (236):

- ՓԱՅՏ ԿԵՆԱՅ. (եկեղց.). Խաչափայտ: Ի գերութիւն վարեաց գփայտն կենաց՝ զխաչն լուսատու տիեզերաց (146):

- ՓՈՒԱԳԻՐԵԼ (ԻՄ) ԱՌ ԲՐԻՍՏՈՍ. Մտնել, վախճանվել: Կեցեալ ամս ԺԴ փոխադրէր առ Քրիստոս (336):

ՔԱՅԼԱՐԱՆ, ի, ագ, գ. Ոտքեր, քայլվածք: Եկեալ բազում ճեպով ընդ այլ բազում տեսողմն՝ ահիւ քաջասլաց քայլարանաց (249):

ՔԱՆԳԱԿՈՒՆ, ա. Քանդակված: Եւ զբաժակս և զըմպելիս արծաթեղէնս քանդակունս յոսկի համակեալս (182):

ՔԱՉԱՎՐԻԺԱԿ, ա. Սաստիկ վրեժ առնող: Քաջավրիժակ խոցուամբ կենագրաւէր (204):

ՔԱՐԱՐՉԱՆ, գ. Քարե արձան: Քարարձան տայր կանգնել և համբուրել յանուն Արրահամու (331):

ՕՐՀՆԱԲԱՆՈՒՄՆ, գ. Օրհնաբանություն, փառաբանություն: Նաւակառիքն ի Ջիւանշիրէ, և օրհնաբանումն նորին (214):

Р. С. КАЗАРЯН, Г. М. АВЕТИСЯН - *Новые слова в книге "История Агвана" Мовсеса Каганкатваци.* - С целью составления наиболее полного представления о лексике, в частности о неологизмах, произведения "История Агвана" армянского историографа и летописца Мовсеса Каганкатваци в статье представлена группа слов, которые по каким-то причинам не вошли в "Новый Айказянский словарь" и "Словарь древнеармянского языка" Р. Казаряна.